Արձանագրություն N 2
«Սոցիալական մեդիա մարքեթինգ» ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/86 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

26.04.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Գևորգյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մայիլյան /գնահատող/, Օ. Սիմոնյան /գնահատող/
Դ. Կարապետյան /բացող/, Ն. Մելիքյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/86» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Տ. Գևորգյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի ապրիլի 26-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

1. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/86 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Գևորգյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«ՕԼՎԵԲ» ՍՊԸ
2	«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Գևորգյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1. «Մեդիա մոնիթորինգ» ծառայությունների ձեռքբերում				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Գնային առաջարկ		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ	1300000	1300000		1300000
«ՕԼՎԵԲ» ՍՊԸ		1249000		1249000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Գևորգյան)

4.1 «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

4.2 «ՕԼՎԵԲ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, ընկերությունը հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ՝ հայտում ներառված բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՕԼՎԵԲ» ՍՊԸ-ի հայտը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջը:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ	Բավարար
«ՕԼՎԵԲ» ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Տ. Գևորգյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Գևորգյան)

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Գևորգյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Ն. Մայիլյան

---------- Օ. Սիմոնյան

---------- Դ. Կարապետյան

---------- Ն. Մելիքյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան